«Ամերիաբանկ» ՓԲԸ
+37410 561111, office@ameriabank.am

# «Ամերիաբանկ» ՓԲԸ Ֆիզիկական անձանց ավանդների և խնայողական հաշվի նկարագրություն և տոկոսադրույքներ

*Ընդունվել է Բանկի Տնօրինության 19.09.2019թ. թիվ 01/108/19 որոշմամբ, ընթացիկ խմբագրությունը՝ 28.11.2022թ. թիվ 04/156/22 որոշմամբ, և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:*

Նվազագույն գումարը՝ 50,000 ՀՀ դրամ ժամկետային ավանդի դեպքում

| ՀՀ դրամ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ավանդի տեսակներ | Տոկոսների վճարման եղանակ | Ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի | | | | | |
| | | 31 –ից 90 օր | 91 –ից 180 օր | 181-ից 270 օր | 271-ից 365 օր | 366-ից 730օր | 731-ից 1825օր |
| | | Անվանական տարեկան տոկոսադրույք[1] (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)[2] | | | | | |
| Ամերիա Ավանդ[3] | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | 4.50% (4.59%) | 6.00% (6.17%) | 7.00% (7.23%) | 8.00% (8.30%) | 9.00% (9.38%) | 9.20% (9.60%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 6.20% (6.35%) | 7.20% (7.40%) | 8.20% (8.46%) | 9.10% (9.42%) | 9.30% (9.63%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 9.20% (9.20%) | 9.40% (9.40%) |
| | Ժամկետի սկզբում | 4.00% (4.10%) | 5.30% (5.52%) | 6.20% (6.55%) | 7.00% (7.53%) | 7.80% (8.85%) | 8.20% (11.13%) |
| Ավանդ ընդհատման[4] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | 3.50% (3.56%) | 5.00% (5.12%) | 6.00% (6.17%) | 7.00% (7.23%) | 8.00% (8.30%) | 8.20% (8.52%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 5.20% (5.30%) | 6.20% (6.35%) | 7.20% (7.40%) | 8.10% (8.35%) | 8.30% (8.56%) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 8.20% (8.20%) | 8.40% (8.40%) |
| **Ավանդ գումարի ավելացման[5] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 5.70% (5.85%) | 6.70% (6.91%) | 7.70% (7.98%) | 8.70% (9.06%) | 8.90% (9.27%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 5.90% (6.03%) | 6.90% (7.08%) | 7.90% (8.14%) | 8.80% (9.09%) | 9.00% (9.31%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 8.90% (8.90%) | 9.10% (9.10%) |
| **Ավանդ գումարի նվազեցման[6] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 5.70% (5.85%) | 6.70% (6.91%) | 7.70% (7.98%) | 8.70% (9.06%) | 8.90% (9.27%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 5.90% (6.03%) | 6.90% (7.08%) | 7.90% (8.14%) | 8.80% (9.09%) | 9.00% (9.31%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 8.90% (8.90%) | 9.10% (9.10%) |
| **Ավանդ գումարի ավելացման[5] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 4.70% (4.80%) | 5.70% (5.85%) | 6.70% (6.91%) | 7.70% (7.98%) | 7.90% (8.19%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 4.90% (4.99%) | 5.90% (6.03%) | 6.90% (7.08%) | 7.80% (8.03%) | 8.00% (8.24%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 7.90% (7.90%) | 8.10% (8.10%) |
| **Ավանդ գումարի նվազեցման[6] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 4.70% (4.80%) | 5.70% (5.85%) | 6.70% (6.91%) | 7.70% (7.98%) | 7.90% (8.19%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 4.90% (4.99%) | 5.90% (6.03%) | 6.90% (7.08%) | 7.80% (8.03%) | 8.00% (8.24%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 7.90% (7.90%) | 8.10% (8.10%) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ավանդ գումարի ավելացման[5] և գումարի նվազեցման[6] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 5.40% (5.54%) | 6.40% (6.59%) | 7.40% (7.66%) | 8.40% (8.73%) | 8.60% (8.95%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 5.60% (5.72%) | 6.60% (6.77%) | 7.60% (7.82%) | 8.50% (8.77%) | 8.70% (8.99%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 8.60% (8.60%) | 8.80% (8.80%) |
| Ավանդ գումարի ավելացման[5], գումարի նվազեցման[6] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 4.40% (4.49%) | 5.40% (5.54%) | 6.40% (6.59%) | 7.40% (7.66%) | 7.60% (7.87%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 4.60% (4.68%) | 5.60% (5.72%) | 6.60% (6.77%) | 7.50% (7.71%) | 7.70% (7.93%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 7.60% (7.60%) | 7.80% (7.80%) |
| Ավանդ գումարի կուտակման[7] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | x | x | x | 9.00% (9.38%) | 9.20% (9.60%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | x | x | x | 9.10% (9.42%) | 9.30% (9.63%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 9.20% (9.20%) | 9.40% (9.40%) |

Նվազագույն գումարը՝ 200 ԱՄՆ դոլար ժամկետային ավանդի դեպքում

| ԱՄՆ դոլար | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ավանդի տեսակներ | Տոկոսների վճարման եղանակ | Ավանդների ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի | | | | | |
| | | 31 –ից 90 օր | 91 –ից 180 օր | 181-ից 270 օր | 271-ից 365 օր | 366-ից 730օր | 731-ից 1825օր |
| | | Անվանական տարեկան տոկոսադրույք (Տարեկան տոկոսային եկամտաբերություն) | | | | | |
| Ամերիա Ավանդ[3] | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | 0.50% (0.50%) | 0.90% (0.90%) | 1.90% (1.92%) | 2.40% (2.43%) | 3.00% (3.04%) | 3.20% (3.25%) |

AMERIABANK

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 1.00% (1.00%) | 2.00% (2.02%) | 2.50% (2.52%) | 3.10% (3.14%) | 3.30% (3.34%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 3.30% (3.30%) | 3.50% (3.50%) |
| | Ժամկետի սկզբում | 0.40% (0.40%) | 0.80% (0.80%) | 1.80% (1.83%) | 2.30% (2.35%) | 2.80% (2.92%) | 2.70% (2.94%) |
| **Ավանդ ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 0.40% (0.40%) | 1.40% (1.41%) | 1.90% (1.92%) | 2.50% (2.53%) | 2.70% (2.73%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.50% (0.50%) | 1.50% (1.51%) | 2.00% (2.02%) | 2.60% (2.63%) | 2.80% (2.83%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 2.80% (2.80%) | 3.00% (3.00%) |
| **Ավանդ Գումարի ավելացման[5] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 0.60% (0.60%) | 1.60% (1.61%) | 2.10% (2.12%) | 2.60% (2.63%) | 2.80% (2.84%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.70% (0.70%) | 1.70% (1.71%) | 2.20% (2.22%) | 2.70% (2.73%) | 2.90% (2.93%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 2.90% (2.90%) | 3.10% (3.10%) |
| **Ավանդ Գումարի նվազեցման[6] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 0.60% (0.60%) | 1.60% (1.61%) | 2.10% (2.12%) | 2.70% (2.73%) | 2.90% (2.94%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.70% (0.70%) | 1.70% (1.71%) | 2.20% (2.22%) | 2.80% (2.83%) | 3.00% (3.03%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 3.00% (3.00%) | 3.20% (3.20%) |
| **Ավանդ Գումարի ավելացման[5] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 0.10% (0.10%) | 1.10% (1.11%) | 1.60% (1.61%) | 2.10% (2.12%) | 2.30% (2.32%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.20% (0.20%) | 1.20% (1.21%) | 1.70% (1.71%) | 2.20% (2.22%) | 2.40% (2.42%) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 2.40% (2.40%) | 2.60% (2.60%) |
| Ավանդ Գումարի նվազեցման[6] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոնների կապիտալացում | x | 0.10% (0.10%) | 1.10% (1.11%) | 1.60% (1.61%) | 2.20% (2.22%) | 2.40% (2.43%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.20% (0.20%) | 1.20% (1.21%) | 1.70% (1.71%) | 2.30% (2.32%) | 2.50% (2.52%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 2.50% (2.50%) | 2.70% (2.70%) |
| Ավանդ Գումարի ավելացման[5] և գումարի նվազեցման[6] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոնների կապիտալացում | x | 0.30% (0.30%) | 1.30% (1.31%) | 1.80% (1.81%) | 2.30% (2.32%) | 2.50% (2.53%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.40% (0.40%) | 1.40% (1.41%) | 1.90% (1.91%) | 2.40% (2.42%) | 2.60% (2.63%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 2.60% (2.60%) | 2.80% (2.80%) |
| Ավանդ Գումարի ավելացման[5], գումարի նվազեցման[6] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ | Ամենամսյա/ ամսական տոկոնների կապիտալացում | x | x | 0.80% (0.80%) | 1.30% (1.31%) | 1.80% (1.81%) | 2.00% (2.02%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | x | 0.90% (0.90%) | 1.40% (1.41%) | 1.90% (1.91%) | 2.10% (2.12%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 2.10% (2.10%) | 2.30% (2.30%) |

Նվազագույն գումարը՝ 200 եվրո ժամկետային ավանդի դեպքում

| Եվրո | | |
|---|---|---|
| Ավանդի տեսակներ | Տոկոսների վճարման եղանակ | Ավանդների ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի |

| | | 31 –ից 90 օր | 91 –ից 180 օր | 181-ից 270 օր | 271-ից 365 օր | 366-ից 730օր | 731-ից 1825օր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անվանական տարեկան տոկոսադրույք (Տարեկան տոկոսային եկամտաբերություն) | | | | | |
| Ամերիա Ավանդ[3] | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | 0.10% (0.10%) | 0.10% (0.10%) | 0.40% (0.40%) | 0.70% (0.70%) | 1.20% (1.21%) | 1.50% (1.51%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 0.20% (0.20%) | 0.50% (0.50%) | 0.80% (0.80%) | 1.30% (1.31%) | 1.60% (1.61%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 1.50% (1.51%) | 1.80% (1.81%) |
| | Ժամկետի սկզբում | 0.10% (0.10%) | 0.10% (0.10%) | 0.40% (0.40%) | 0.70% (0.70%) | 1.10% (1.12%) | 1.30% (1.35%) |
| Եվրոյով ներդրվող ավանդների դեպքում ավանդատուն չունի ավանդի գումարի ավելացման, նվազեցման և ընդհատման հնարավորություն: | | | | | | | |

**Նվազագույն գումարը՝ 10,000 ՌԴ ռուբլի ժամկետային ավանդի դեպքում**

| ՌԴ ռուբլի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ավանդի տեսակներ | Տոկոսների վճարման եղանակ | Ավանդների ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի | | | | | |
| | | 31 –ից 90 օր | 91 –ից 180 օր | 181-ից 270 օր | 271-ից 365 օր | 366-ից 730օր | 731-ից 1825օր |
| | | Անվանական տարեկան տոկոսադրույք (Տարեկան տոկոսային եկամտաբերություն) | | | | | |
| Ամերիա Ավանդ[3] | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | 1.80% (1.81%) | 2.70% (2.73%) | 3.70% (3.76%) | 4.20% (4.28%) | 4.20% (4.28%) | 4.20% (4.28%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.80% (2.83%) | 3.80% (3.85%) | 4.30% (4.37%) | 4.30% (4.37%) | 4.30% (4.37%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 4.50% (4.50%) | 4.50% (4.50%) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ժամկետի սկզբում | 1.70% (1.72%) | 2.60% (2.65%) | 3.50% (3.61%) | 4.00% (4.17%) | 3.80% (4.03%) | 3.20% (3.55%) |
| **Ավանդ ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | 1.40% (1.41%) | 2.30% (2.32%) | 3.30% (3.35%) | 3.80% (3.87%) | 3.80% (3.87%) | 3.80% (3.87%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.40% (2.42%) | 3.40% (3.44%) | 3.90% (3.96%) | 3.90% (3.96%) | 3.90% (3.96%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 4.10% (4.10%) | 4.10% (4.10%) |
| **Ավանդ Գումարի ավելացման[5] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 2.40% (2.43%) | 3.40% (3.45%) | 3.90% (3.97%) | 3.70% (3.76%) | 3.70% (3.76%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.50% (2.52%) | 3.50% (3.55%) | 4.00% (4.06%) | 3.80% (3.85%) | 3.80% (3.85%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 4.00% (4.00%) | 4.00% (4.00%) |
| **Ավանդ Գումարի նվազեցման[6] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 2.40% (2.43%) | 3.40% (3.45%) | 3.90% (3.97%) | 3.90% (3.97%) | 3.90% (3.97%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.50% (2.52%) | 3.50% (3.55%) | 4.00% (4.06%) | 4.00% (4.06%) | 4.00% (4.06%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 4.20% (4.20%) | 4.20% (4.20%) |
| | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 2.00% (2.02%) | 3.00% (3.04%) | 3.50% (3.56%) | 3.30% (3.35%) | 3.30% (3.35%) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ավանդ Գումարի ավելացման[5] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ** | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.10% (2.12%) | 3.10% (3.14%) | 3.60% (3.65%) | 3.40% (3.44%) | 3.40% (3.44%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 3.60% (3.60%) | 3.60% (3.60%) |
| **Ավանդ Գումարի նվազեցման[6] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 2.00% (2.02%) | 3.00% (3.04%) | 3.50% (3.56%) | 3.50% (3.56%) | 3.50% (3.56%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.10% (2.12%) | 3.10% (3.14%) | 3.60% (3.65%) | 3.60% (3.65%) | 3.60% (3.65%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 3.80% (3.80%) | 3.80% (3.80%) |
| **Ավանդ Գումարի ավելացման[5] և գումարի նվազեցման[6] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 2.10% (2.12%) | 3.10% (3.14%) | 3.60% (3.66%) | 3.40% (3.45%) | 3.40% (3.45%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 2.20% (2.22%) | 3.20% (3.24%) | 3.70% (3.75%) | 3.50% (3.55%) | 3.50% (3.55%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 3.70% (3.70%) | 3.70% (3.70%) |
| **Ավանդ գումարի ավելացման[5], նվազեցման[6] և ավանդի ընդհատման[4] հնարավորությամբ** | Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում | x | 1.70% (1.71%) | 2.70% (2.73%) | 3.20% (3.25%) | 3.00% (3.04%) | 3.00% (3.04%) |
| | Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում | x | 1.80% (1.81%) | 2.80% (2.83%) | 3.30% (3.34%) | 3.10% (3.14%) | 3.10% (3.14%) |
| | Տարեկան/տարեկան կապիտալացում | x | x | x | x | 3.30% (3.30%) | 3.30% (3.30%) |

Եթե ներկայացված աղյուսակների համապատասխան դաշտում նշված է «X», ապա նշանակում է, որ տվյալ ավանդատեսակի համար այդ պայմանը կիրառելի չէ:

## Խնայողական հաշիվ[8]

Հաշվի նվազագույն մնացորդը և տոկոսների հաշվարկման կարգ

| Արժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի |
|---|---|---|---|---|
| Հաշվի Նվազագույն մնացորդ | 200,000 ՀՀ դրամ | 500 ԱՄՆ դոլար | 300 Եվրո | 15,000 ՌԴ ռուբլի |
| Տարեկան անվանական տոկոսադրույք/ (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)* | 4.0% (4.07%) | 0.5% (0.5%) | 0.1% (0.1%) | 1.0% (1.0%) |

[1] ՀՀ դրամով նոր ժամկետային ավանդի հայտը MyAmeria համակարգով լրացնելու դեպքում կիրառվում է հավելյալ 0.25% տոկոսադրույք (հավելյալ տոկոսադրույքը կիրառելի չէ Պրեմիում/Փարթներ հաճախորդների՝ 181 և ավել օր ժամկետով ավանդների համար):
Օնլայն/Մոբայլ բանկինգ և MyAmeria համակարգերով սույն կետով սահմանված արտոնյալ պայմաններով կնքված ավանդները ժամկետի ավարտին երկարաձգվում են MyAmeria համակարգի համար գործող արտոնյալ պայմանով:

[2] ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ:
ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱ ՀԱՃԱԽՈՐԴՆ՝ ԻՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:
ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՆ Է՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

*Որտեղ՝*
*i - մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքն է (ՄՍԷՏ),*
*Kn - դրամական միջոցների n հոսքերը բանկի տեսանկյունից,*
*N -դրամական միջոցների հոսքերի քանակը՝ կապված տվյալ ֆինանսական գործիքի հետ,*
*A - ներգրավված կամ տրամադրված միջոցի սկզբնական գումարը,*
*Dn - n-րդ դրամական հոսքի ստացման ժամանակահատվածը՝ արտահայտված առաջին հոսքից հետո անցած օրերի թվով (առաջին հոսքը միջոցի ներգրավման կամ տրամադրման ամսաթիվն է):*
Ամերիա Ավանդի հաշվիչ՝ http://depositcalculator.ameriabank.am/

[3] **Ամերիա Ավանդ՝** Հաճախորդը չունի ավանդի գումարը ավելացնելու և/կամ նվազեցնելու իրավունք:

* Խնայողական հաշվի փաստացի մնացորդը նշված նվազագույն մնացորդից փոքր լինելու դեպքում հաճախորդի խնայողական հաշվին վճարվում է տոկոսագումար տարեկան 0.1% տոկոսադրույքով նշված բոլոր արժույթների համար:

[4] Հաճախորդի կողմից ավանդը ժամկետից շուտ ամբողջությամբ դադարեցնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ ավանդի պայմանագրի դադարեցման պահի դրությամբ ավանդի փաստացի գործողության ժամանակահատվածին համապատասխանող տվյալ ավանդատեսակի համար սահմանված տոկոսադրույքով:
Մինչև 30 օր ժամկետում ավանդը ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ տարեկան 0.1% տոկոսադրույքով:
Ավանդը ժամկետից շուտ դադարեցնելիս, եթե տվյալ ժամանակահատվածի համար որևէ պայման կիրառելի չէ (նշված է **"x"**), ապա վերահաշվարկվող տոկոսադրույքի հաշվարկում այն ներառվում է «0» (զրո) արժեքով: Տվյալ հնարավորությունն ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:
[5] Հաճախորդն իրավունք ունի ավելացնելու ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 ամիսների: Ավանդի գումարը կարող է համալրվել. ՀՀ դրամով ավանդի դեպքում՝ ավանդի ներդրման պահին ավանդի գումարի առավելագույնը 50%-ի չափով, արտարժույթով ավանդի դեպքում՝ ավանդի ներդրման պահին ավանդի գումարի առավելագույնը 30%-ի չափով: Տվյալ հնարավորությունն ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:
[6] Հաճախորդն իրավունք ունի նվազեցնելու ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության առաջին 3 ամիսների: Ավանդի գումարը կարող է նվազել ավանդի ներդրման պահին ավանդի գումարի առավելագույնը 30%-ի չափով: Վերադարձված մասի նկատմամբ կուտակված տոկոսների վերահաշվարկ չի կատարվում: Տվյալ հնարավորությունն ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:
[7] Հաճախորդն իրավունք ունի ավելացնելու ավանդի գումարն առավելագույնը 40 մլն ՀՀ դրամի չափով՝ անկախ ներդրման պահին ավանդի գումարի մեծությունից՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 ամիսների: Կուտակման հնարավորության դեպքում կիրառելի չեն ավանդի «ավելացման», «նվազեցման» և «ընդհատման» հնարավորությունները: Յուրաքանչյուր հաճախորդ կարող է ունենալ գործող կուտակման հնարավորությամբ միայն մեկ ավանդ:
[8] **«Խնայողական հաշիվ»՝** Խնայողական հաշվի պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով և կարող է վաղաժամկետ դադարել հետևյալ դեպքերում.

1. Հաշվետիրոջ նախաձեռնությամբ, իսկ համատեղ հաշվի դեպքում՝ բոլոր Հաշվետերերի փոխադարձ համաձայնությամբ՝ հաշվի փակման հայտը գրավոր թղթային կամ վերջինիս կողմից Բանկի հետ որպես հաղորդակցման եղանակ նախընտրած հեռավար կապի միջոցով ներկայացված հանձնարարականի հիման վրա: Հաշիվը փակվում է, եթե առկա չէ հաշվի վրա դրական մնացորդ, Բանկի նկատմամբ պարտավորություն և/կամ հաշվի վրա արգելանք, իսկ դրական մնացորդի առկայության դեպքում գումարը կանխիկացվում է կամ փոխանցվում է Բանկի այլ հաշվեհամարին կամ այլ բանկի հաշվեհամարին, որից հետո զրոյական մնացորդով հաշիվը փակվում է հաշվի փակման դիմումը ներկայացնելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:
2. Բանկի նախաձեռնությամբ՝
   2.1. հաշիվների և հաճախորդների բազայի մոնիթորինգի արդյունքների հիման վրա,
   2.2. նախորդ 12 ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և զրոյական մնացորդի առկայության դեպքերում:

Խնայողական հաշվի փակման մասին Հաշվետեր(եր)ը ծանուցվում են առնվազն 5 օր առաջ համաձայն պայմանագրի՝ Հաշվետիրոջ կողմից ընտրված հաղորդակցման եղանակով (էլեկտրոնային եղանակով, Բանկի տարածքում առձեռն, փոստային կապի միջոցով կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով):

AMERIABANK

# Ընդհանուր դրույթներ և տեղեկատվություն

## Ավանդներ

1. 2 մլրդ ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավել ժամկետային ավանդների դեպքում պայմանները սահմանվում են համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:
2. Ավանդի տոկոսադրույքը որոշվում է Ամերիա Ավանդատեսակի տոկոսադրույքի (հաճախորդի կողմից ընտրված ժամկետի և տոկոսների վճարման եղանակին համապատասխան) և հաճախորդի կողմից ընտրված «հնարավորությունների» թվաբանական գումարով:
3. Տոկոսների հաշվարկը իրականացվում է Ավանդի՝ Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
4. Ավանդատուի բանկային հաշվին մուտքագրված տոկոսագումարը ենթակա է հարկման եկամտային հարկով՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 10% տոկոսադրույքով:
5. Ավանդային պայմանագրով կարող է նախատեսվել տոկոսների վճարման հետևյալ եղանակներից մեկը՝

**Տոկոսների ամսական վճարում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր ամիս հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:

**Ամսական տոկոսների կապիտալացում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր հաջորդ ամսվա ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտային հարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:

**Տոկոսների եռամսյակային վճարում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ եռամսյակի վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:

**Եռամսյակային տոկոսների կապիտալացում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտային հարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:

**Տոկոսների տարեկան վճարում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, տարին մեկ անգամ տարվա վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:

**Տոկոսների տարեկան կապիտալացում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, տարին մեկ անգամ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտային հարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:

**Տոկոսների վճարում ժամկետի սկզբում՝** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար տոկոսագումարները հաշվեգրվում են Ավանդատուի հաշվին ավանդի ներդրման օրը: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:

6. Բանկային ավանդի հայտ-պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:
7. Բանկը պարտավոր է Ավանդը կամ դրա մի մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով: Սույն պայմաններով սամանված կարգով Ավանդատուի առաջին իսկ պահանջով Ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջվելու դեպքում Բանկը Ավանդատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կատարում է վերահաշվարկ և վերադարձնում է վերահաշվարկման արդյունքում մնացած Ավանդի գումարը: Այդ դեպքում հաճախորդին վճարվում է տոկոսագումար ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքի փոխարեն տարեկան 0.1% տոկոսադրույքով: Այն դեպքում, երբ ավանդատուին արդեն վճարվել են տոկոսներ, որոնք վերահաշվարկման արդյունքում ենթակա են հետ գանձման, Ավանդի մայր գումարից նվազեցվում է վճարված տոկոսագումարների և տարեկան 0.1% տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների տարբերությունը: Սույն կետը կիրառվում է, եթե ավանդի պայմաններով և/կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
8. Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ հայտ-պայմանագրում կատարված նշումի՝ կա՛մ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը հայտ-պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կա՛մ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները:
9. Ավանդատուի մահվան դեպքում Ավանդի տոկոսների հավելագրումը շարունակվում է մինչև բանկային ավանդի հայտ-պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, որից հետո Բանկը Ավանդը և հավելագրված տոկոսները փոխանցում է Ավանդատուի բանկային հաշվին: Տվյալ դեպքում նշված գումարները Ավանդատուի ժառանգներին են տրվում նշված գումարների նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքը հաստատող օրենքով սահմանված կարգով ժառանգության պատշաճ ձևակերպման և այդ փաստը հավաստող փաստաթղթերը բանկ ներկայացնելու դեպքում:
10. Ավանդների հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ չափերը.
    - միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է 16 մլն ՀՀ դրամ,
    - միայն արտարժութային ավանդի առկայության դեպքում ավանդը երաշխավորվում է 7 մլն ՀՀ դրամի չափով,
    - եթե ավանդատուն ունի դրամային և արտարժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն ՀՀ դրամից ավելի է, երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
    - եթե դրամային ավանդը պակաս է 7 մլն ՀՀ դրամից, երաշխավորվում են դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Ընդ որում, Բանկում առկա բոլոր՝

1.դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ,
2.արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ

11. Բանկի որոշմամբ կարող է տրամադրվել **վարկ/քարտով վարկային գիծ (դեբետային կամ կրեդիտային քարտով)** հետևյալ պայմաններով՝

| Արժույթ | Տոկոսադրույք | Վարկ/Ավանդ հարաբերակցություն (LTV)[2] |
|---|---|---|
| Ավանդի արժույթով | Ավանդի տոկոսադրույք+4% | Մինչև 90% |
| Ավանդի արժույթից տարբերվող արժույթով | Մանրածախ վարկավորման պայմաններով սահմանված տոկոսադրույքներով | Մինչև 70% |

12. Քարտով վարկային գծի/օվերդրաֆտի/վարկի պարտավորությունները ժամանակին չմարելու դեպքում Բանկն իրավունք անակցեպտ գանձելու պարտավորության գումարն ավանդի գումարից: Ներդրված ավանդի տոկոսների հաշվարկման օրինակ՝

| | |
|---|---|
| **Ավանդի տեսակ՝**<br>**Արժույթ՝**<br>**Ժամկետ և տոկոսների վճարման եղանակ՝**<br>**Ավանդի գումար՝**<br>**Տարեկան պարզ տոկոսադրույք՝**<br>**Ավանդի ներդրման ամսաթիվ՝**<br>**Ավանդի մարման ամսաթիվ՝** | Ամերիա ավանդ<br>ՀՀ դրամ<br>366 օր ժամկետով՝ տոկոսների վճարման ժամկետի սկզբում եղանակ<br>100,000 ՀՀ դրամ<br>7.5%<br>01/06/2020<br>02/06/2021 |
| **Տոկոսների վճարման ամսաթիվ՝**<br>**Վճարվելիք տոկոսագումար** | 01/06/2020<br>*(ավանդը գործելու է 366 օր, չի հաշվարկվում ավանդի վճարման օրը)*<br>100,000 * 7.5/100/365 * 366 = **7,520.55 ՀՀ դրամ** |
| **Վճարվելիք զուտ տոկոսագումար**<br>*(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)* | 7,520.55- 7,520.55 * 10/100 = **6,768.50 ՀՀ դրամ** |

## Խնայողական հաշիվ

1. Խնայողական հաշվի սպասարկման ողջ ժամկետի ընթացքում հաճախորդն իրավունք ունի ավելացնելու և նվազեցնելու հաշվի մնացորդը: Խնայողական հաշվի դիմաց տոկոսները հաշվարկվում են խնայողական հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ: Խնայողական հաշվի հաշվետերը իրավունք ունի խնայողական հաշվի գումարները օգտագործելու առանց սահմանափակումների:

[2] Վարկային գիծ/ավանդ հարաբերակցության մեջ ավանդի գումարը ներառվում է ժամկետի սկզբում վճարված տոկոսագումարը նվազեցնելուց հետո:

2. Տոկոսների հաշվարկը իրականացվում է խնայողական հաշվին գումարը մուտքագրելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
3. Խնայողական հաշվի մնացորդի դիմաց տոկոսագումարները հաշվարկվում են օրական կտրվածքով, այդ օրվա դրությամբ հաշվին առկա դրական փաստացի մնացորդի վրա, և հաշվարկված տոկոսագումարները վճարվում են օրացուցային տարվա յուրաքանչյուր ամսվա վերջում՝ գումարվելով հաշվի մնացորդին: Հաճախորդին տոկոսագումարները վճարվում են հաշվի արժույթով:
4. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով 1/365 օր հարաբերակցությունը:
5. Խնայողական հաշվի հայտ-պայմանագրով սահմանված խնայողական հաշվի համար տոկոսների չափը Բանկի կողմից կարող է միակողմանիորեն փոփոխվել, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Այդ մասին Բանկը առնվազն տասնհինգ օր առաջ պետք է ծանուցի հաճախորդներին:
6. Խնայողական հաշվին մուտքագրված տոկոսագումարը ենթակա է հարկման եկամտային հարկով՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 10% տոկոսադրույքով:
7. Խնայողական հաշվով ստացվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

| | |
|---|---|
| **Խնայողական հաշվի գումար ՝**<br>**Արժույթ՝**<br>**Ներդրման ամսաթիվ՝**<br>**Տարեկան պարզ տոկոսադրույք՝** | 200,000<br>ՀՀ դրամ<br>01/06/20<br>4% |
| **Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝**<br><br>**Վճարվելիք տոկոսագումար՝** | 30/06/2020<br>(տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է խնայողական հաշվին գումարը մուտքագրվելու առաջին օրվանից)<br>200,000*4/100/365*30 = **657.53 ՀՀ դրամ** |
| **Վճարվելիք զուտ տոկոսագումար՝**<br>*(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)* | 657.53- 657.53 * 10/100 = **591.77 ՀՀ դրամ** |
| **Խնայողական հաշվի գումար՝** | **200,591.77 ՀՀ դրամ**<br>**01/07/20թ.-ին խնայողական հաշվի գումարը ավելացել է 50,000 ՀՀ դրամով:** |
| **Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝**<br><br>**Վճարվելիք տոկոսագումար՝** | 31/07/2020<br>(տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է խնայողական հաշվին գումարը մուտքագրվելու առաջին օրվանից)<br>250,591.77*4/100/365*31 = **851.33 ՀՀ դրամ** |
| **Վճարվելիք զուտ տոկոսագումար՝**<br>*(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)* | 851.33- 851.33 * 10/100 = **766.20 ՀՀ դրամ** |
| **Խնայողական հաշվի գումար՝** | **251,357.97 ՀՀ դրամ**<br>**01/08/20-ին խնայողական հաշվի գումարը նվազել է 100,000 ՀՀ դրամով** |

| | |
|---|---|
| **Տոկոսների վճարման երրորդ ամսաթիվ՝**<br><br>**Վճարվելիք տոկոսագումար՝** | 31/08/2020<br>(տոկոսագումարի հաշվարկ չի իրականացվում խնայողական հաշվից գումարը դուրս գրվելու օրվա համար, և քանի որ նոր մնացորդը սահմանված նվազագույն մնացորդից ցածր է, խնայողական հաշվին վճարվում է տոկոսագումար տարեկան 0.1% տոկոսադրույքի չափով)<br><br>151,357.97*0.1/100/365*31 = **12.86 ՀՀ դրամ** |
| **Վճարվելիք զուտ տոկոսագումար՝**<br>*(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)* | 12.85- 12.85 * 10/100 = **11.57 ՀՀ դրամ** |

**Հաշիվների քաղվածքի ստացման կարգը**

Հաշիվների քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Հաճախորդն իրավունք ունի հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ իր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:
Հաշվից քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

| *Քաղվածքի տրամադրման միջնորդավճար* | |
|---|---|
| **Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում** | **անվճար** |
| 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում | 5,000 ՀՀ դրամ՝<br>ներառյալ ԱԱՀ<br>յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար |
| 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի ուղարկում հաճախորդի էլեկտրոնային հասցեին առանց դրոշմակնիքի | 3,000 ՀՀ դրամ՝<br>ներառյալ ԱԱՀ<br>յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար |
| Քաղվածքի առաքման միջնորդավճար | |
| Էլեկտրոնային փոստով | անվճար |
| Փոստով՝ ՀՀ տարածքում | Ամսական 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |

| | |
|---|---|
| Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս3 | Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի |

Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

[3] Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով: